

Հրէաներն միակ ժողովուրդն են եղած որուն
յայտնութիւն մը չնորոտած է :

Հ. — Հրէաներն ուրեմն աշխարհին միակ
բարոյական ժողովուրդն էին :

Պ. — Բնաւ երեք է . Յոյները որ Յայտնու-
թիւն չունէին, հնութեան ամենէն յառաջացեալ
ժողովուրդն էին :

Հ. — Ի՞նչ կը նշանակէ այս իրողութիւնը :

Պ. — Թէ բարոյականը անկախ է ո եւ է
Յայտնութիւնէ :

Հ. — Լա՞ւ է քարոզել թէ ո եւ է բարոյա-
կան անկարելի է առանց Յայտնութեան :

Պ. — Լաւ չէ . նախ՝ որովհետեւ ճշմարտ
չէ , եւ երկրորդ՝ որովհետեւ մարդիկ՝ Յայտ-
նութեան մասին իրենց հաւատքը կորսնցնելով՝
Բարին վրայ իրենց հաւատքն ալ պիտի կոր-
սնցնէին :

Հ. — Ի՞նչպէս կրնանք տեսական դարձնել
մեր հաւատքը Բարին վրայ :

Պ. — Սիրելով ու գործելով Բարին քնք
իրեն համար :

Հ. — Լաւ վարուելու համար ուրիշ ի՞նչ
պատճառներ կան :

Պ. — Ամենէն ուժեղ պատճառները անոնք
են որ յառաջ կուգան պահանջկոտ ինքնայար-
գանքէ մը , յետոյ՝ աշխարհական մղումը եւ
պարտականութեան զգացումը :

Հ. — Ի՞նչ բան է « պարտականութեան
զգացում » :

Պ. — Այն զգացումը թէ պարտինք կատա-
րել այնպիսի գործեր որ կեանքը աւելի ներուժ
կը դարձնեն կամ զայն գեղեցիկ կը կացուցա-
նեն , եւ խորշիկ այն գործերն որ իրենց հետ
կը բերեն ամօթը , թշուառութիւնը եւ չարիքը :

Հ. — Միշտ հանելի՞ք բան մըն է պարտակա-
նութիւնը կատարել :

Պ. — Հին կրօնները կը քարոզեն թէ պար-
տականութիւնը « խաչ » մըն է , եւ թէ բարի
ըլլաւու համար պէտք է որ մենք մեզ գոհնեցնենք :

Հ. — Ի՞նչ է այդպիսի քարոզութեան մը
հետեւանքը :

Պ. — Թէ մարդիկ կը վախճան բարի մար-
դու պէս ապրելէ եւ թէ իրենց միտքը այդպիսի
կեանքի մը գաղափարը կը զուգորդէ տխրու-
թեան եւ կեղեքման գաղափարներու :

Հ. — Դեռ ուրիշ ի՞նչ :

Պ. — Թէ այդ քարոզութիւնը կարծել կու-
տայ որ միայն չարերը երջանիկ կ'ըլլան աշ-
խարհին մէջ :

Հ. — Ո՞րն է պարտականութեան ճիշդ յղա-
ցումը :

Պ. — Թէ ան « խաչ » մը կամ ինքնագոհու-
թիւն մը չէ , այլ ներդաշնակութիւն , գեղեց-
կութիւն եւ հրճուանք : Այն աստի՛ն միայն ինք-
զինքնիս գոհած եւ կեանքերնիս « խաչ » մը
դարձուցած կ'ըլլանք երբ մարմնոյ եւ մտքի
օրէնքներուն չենք հնազանդիր :

Մ. ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ



ԵԵԿՆՈՒՄՆԵՐ

Կարգաւ նաւեր կը մեկնին
Դէպ ի ծովերն ճեռաւոր ,
ու կը թողուն ետեւնին
Մուխի ամպեր նըրբոյր :

Նաւահնգախոտն առանձին
Կը մրտմրտայ սրգաւոր .
ու նաւերը որ զացին
Ա՛լ չեն դառնար ծոցն անոր :

Դէպ ի վիհներն արցունքի
Իմ երազներս շուտ փախան՝
Յուշ մը թողլով անհրաժեշտ :

ու , ցաւերու մենարան .
Ջո՛ր կըսպասէ սիրտըս յար
Երազներուս որ չեն գար :

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

